գէթ մի անգամ ի տարւոջ, իսկ օգնականք նորա բազմիցս՝ ի մասնաւոր շրջանս իւրեանց։

13. Թեմական Վերատեսուչն նկատելով անձամբ անձին զորպիսի և իցէ անկարգութիւնս ի դպրոցս թէ ըստ ուսումնական և թէ ըստ տնտեսական մասին, կամ ստանալով զտեղեկութիւնս յօգնականաց իւրոց, ի վարժապետաց և ի մասնաւոր տեսչաց, ի հոգաբարձուաց և կամ ի ծնողաց աշակերտաց, սակս ինչ ինչ անկարգութեանց, փութայ բառնալ և հեռացուցանել զայնոսիկ՝ առնելով անյապաղ զարժանաւոր տնօրէնութիւնս։

14. Թեմական Վերատեսուչն քննէ զամենայն զանգատս զօգնականաց, զվարժապետաց, զտեսչաց և զհոգաբարձութեանց, և առնէ զարժանաւոր տնօրէնութիւն. իսկ ի ծանրակշիռ խնդիրս առաջարկէ զայնոսիկ Առաջնորդին հանդերձ դատողութեամբ իւրով։

15. Թեմական Վերատեսուչն պարտի հոգալ և պատրաստել զդիւրըմբռնելի դասագիրս և հնարել զյարմար եղանակս դասաւանդութեանց ըստ ընդունակութեանց աշակերտաց իւրաքանչիւր տեղեաց։

16. Թեմական Վերատեսուչն յօրինէ զհրահանգս վասն օգնականաց իւրոց և առաջարկէ Առաջնորդին ի հաստատութիւն։

17. Թեմական Վերատեսուչն քննէ և հաստատէ զհրահանգս յօրինեալս յիւրոց օգնականաց վասն դպրոցաց շրջանաց իւրեանց։

18. Թեմական Վերատեսուչն քննէ ըզտարեկան հաշիւս օգնականաց իւրոց։

19. Թեմական Վերատեսուչն քննէ ըզտարեկան հաշիւս (թէ ըստ տնտեսական մասին և թէ ըստ ուսումնական) իւրաքանչիւր դպրոցի, զորս առաջարկեն նմա վարչութիւնք դպրոցաց ի ձեռն օգնականաց նորա։

20. Թեմական Վերատեսուչն կարէ զըննել զմատեանս հոգաբարձուաց երբ և կամեսցի։

21. Թեմական Վերատեսուչն գումարէ ի տարւոջ երկիցս զմանկավարժական ժողովս յօգնականաց իւրոց։

22. Թեմական Վերատեսուչն յամենայն փետրուարի՝ առաջարկէ Առաջնորդին ըզտարեկան մանրամասն հաշիւս վասն անցեալ ամի։

23. Վիճակաւոր Առաջնորդն զտարեկան հաշիւս Թեմական Վերատեսչի հանդերձ իւրովք նկատողութեամբք առաջարկէ Սինոդին Ս. Էջմիածնի ի քննութիւն։

(*) Այս հրահանգ ունի ենթարկել փոփոխութեանց ըստ փորձառութեանցն օգտաւէտ երեւելոց, և յաւելուլ կամ կարճել ի սմին զյօդուածըս համաձայն պահանջից ժամանակին։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ
## Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շ–ր––ն–կ––թ–ւ–ն):

### Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՅ.

| | | |
|---|---|---|
| Հասարակութիւն Զրախչի գեղջ . | 13 | |
| Նոյն գիւղացի Դանիէլ քահանայ Տէր Կարապետեան . . | 1 | |
| ,, Վարդան քահ. Փահլիվանեանց | 1 | |
| ,, Վարդան Յարութիւնեան . | | 50 |
| ,, Վարդան Խաչատրեան . | | 80 |
| ,, Յովհաննէս Կիրակոսեան . | | 20 |

| | | |
|---|---|---|
| ,, Ղազար Սողօմոնեան . . | | 50 |
| ,, Աւետիս Յովհաննէսեան . | | 50 |
| ,, Աստուածատուր Սարգսեան . | | 50 |
| ,, Մանուկ Բօղջեան . . | | 25 |
| ,, Սիմէօն Մինասեան . . | | 40 |
| ,, Մանուկ Մինասեան . . | | 40 |
| ,, Յովհաննէս Յարութիւնեան . | | 40 |
| ,, Մատթէոս Գրիգորեան . . | | 80 |
| ,, Պապօ Գալստեան . . | | 20 |
| ,, Աւագ Սարգսեան . . . | | 20 |
| ,, Մկրտիչ Գրիգորեան . . | 1 | |
| ,, Զատօյ Աւետսեան . . | | 20 |
| ,, Յակօյ Նահապետեան . . | | 20 |
| ,, Համբարձում Կարապետեան . | | 50 |
| Հասարակութիւն Փամբ գեղջ . . | 6 | |
| Նոյն գիւղացի Պօղոս Մխիթարեան . | 1 | |
| ,, Մատթէոս Աստուածատրեան . | 1 | |
| ,, Նիկօյ Մելիքեան . . | 1 | |
| ,, Ղունկի Աթօյեան . . | 1 | |
| ,, Սուքիաս Ղազարեան . . | | 50 |
| ,, Մարկոս Տէր Թադէոսեան . | | 20 |
| ,, Եսայի Եսայեան . . | | 20 |
| ,, Պօղոս Յօհաննէսեան . . | | 30 |
| ,, Յօհաննէս Սիմէօնեան . . | 1 | |
| ,, Ներսէս Անդրէասեան . . | 1 | |
| ,, Մանուկ Կիրակոսեան . . | | 60 |
| ,, Մանուկ Կարապետեան . . | | 20 |
| ,, Թադէոս քահ. Սեղբոսեանց . | | 30 |
| Հասարակութիւն Մունջուխլի գեղջ . | 7 | |
| Նոյն գիւղացի Եղիայ քահ Տէր Սարգսեան . . . | | 50 |
| ,, Տէր Սարգսեան Աղէքսանդր . | | 50 |
| ,, Պետրոս Մանասեանց . . | | 25 |
| ,, Մարտիրոս Խաչատրեանց . | | 20 |
| ,, Մարգօ Պետրոսեանց . . | | 20 |
| ,, Թովմաս Սարգսեանց . . | | 10 |
| ,, Յարօ Սաֆարեանց . . | | 10 |
| ,, Յարութիւն Մարտօյեանց . | | 10 |
| ,, Գրիգոր Թամօյեանց . . | | 10 |
| ,, Մանուկ Բաղտասարեանց . | | 10 |
| ,, Ասլան Բաղտասարեանց . | | 25 |
| Հասարակութիւն Քեշիշքեանդ գեղջ . | 5 | |
| Նոյն գիւղացի Մխիթար Մուրատեան | | 20 |
| ,, Պօղոս Յարութիւնեան . . | | 20 |
| ,, Եղբարք Պօղոս և Յովհաննէս Պետրոսեան . . | | 20 |
| ,, Սարգիս Միրզօյեան . . | | 20 |
| ,, Գրիգոր Կարապետեան և կին նորա . . . | | 20 |
| ,, Յակոբ Բայրախտարեանց . | | 10 |
| ,, Հերքինազ Կիրակոսեան . | | 10 |
| ,, Ներսէս Յովսէփեան . . | | 5 |
| ,, Բաղալ Մարտիրոսեան . . | | 10 |
| ,, Մանուկ Յովակիմեան . . | | 10 |
| ,, Ասմար Բայրախտարեան . . | | 10 |
| ,, Գէորգ Մովսէսեան . . | | 10 |
| ,, Դանիէլ Պետրոսեան . , | | 10 |
| ,, Մինաս Յարութիւնեան . . | | 10 |
| ,, Խաչատուր Աղաճանեան . . | | 10 |
| Հասարակութիւն Ջանկի-թափայ գեղջ | 3 | |
| Նոյն գիւղացի Աղաջան Մարգարեան . | | 30 |
| ,, Սաֆար Մալխասեան . . | | 20 |
| ,, Մարտիրոս Մուրատեան . | | 20 |
| ,, Բարսեղ Կակօյեան . . | | 20 |
| Հասարակութիւն Նորաշէն գեղջ . | 10 | |
| Նոյն գիւղացի Թադէոս քահանայ . | | 40 |
| ,, Ղազար քահանայ Յովսէփեան | | 30 |
| ,, Թէոս Մինասեան . . | | 20 |
| ,, Յովակիմ Թորոսեան . . | | 40 |
| ,, Յարութիւն Յովհաննէսեան . | | 20 |
| ,, Սարգիս Սահակեան . | | 20 |
| ,, Գէորգ Երանոսեան . . | | 10 |
| ,, Յովհաննէս Մարտիրոսեան . | | 10 |
| ,, Մովսէս Մաթոսեան . . | | 20 |
| ,, Յարութիւն Աղատեան . . | | 10 |
| ,, Վարդան Կարապետեան . | | 20 |
| ,, Հաճի Գրիգոր Յովհաննէսեան . | | 20 |
| ,, Աղէքսանդր քահ. Թերջանեանց | | 25 |
| Հասարակութիւն Խանվալի գեղջ . | 4 | |
| Նոյն գիւղացի Գալուստ Երանեան . | | 20 |
| ,, Կարապետ Արզումանեան . | | 40 |
| ,, Մանուկ Յարութիւնեան . | | 20 |
| ,, Սարգիս Գրիգորեան . . | | 10 |
| ,, Օհաննէս Շապօյեան . . | | 20 |
| ,, Գրիգոր Վարդանեան . | | 10 |
| ,, Մարգար Մատօյեան . . | | 10 |

| | | |
|---|---|---|
| ,, Վարդան Մանուկեան . . | | 10 |
| ,, Վարդան Պետրոսեան . . | | 10 |
| ,, Օվակ Զաքարեան . . | | 20 |
| Հասարակութիւն Հաջիխալիլ գեղջ . | 13 | |
| Նոյն գիւղացի Գէորգ Օհանեան . | 1 | |
| ,, Ադամ Գէորգեան . . | | 50 |
| ,, Եղիկ Սանթոյեան . . | | 50 |
| ,, Վարդան Փանոսեան . . | | 50 |
| ,, Պօղոս Ասլանեան . . | | 40 |
| ,, Գէորգ Յարութիւնեան . . | | 20 |
| ,, Դանիէլ Յակոբեան . . | | 20 |
| ,, Կոստան Միքայէլեան . . | | 25 |
| ,, Յակոյ Նազարէթեան . . | | 50 |
| ,, Յովակ Նիկոյեան . . | | 20 |
| ,, Կարապետ Սարգսեան . . | | 20 |
| ,, Անտոն Աթոյեան . . . | | 20 |
| ,, Խաչատուր Պօղոսեան . . | | 40 |
| ,, Կիրակոս Ներսէսեան . . | | 50 |
| ,, Մատի Աբրահամեան . . | | 20 |
| ,, Յակոբ Պապոյեան . . | | 20 |
| ,, Յովսէփ Ասլանեան . . | | 30 |
| ,, Մկրտիչ Մանասեան . . | | 25 |
| ,, Պօղոսի կին Մարգարիտն . | | 20 |
| ,, Աբրահամ Գրիգորեան . | | 20 |
| ,, Սարգսի կին Նունուփարն . | | 20 |
| ,, Յովակի կին Նազանին . | | 20 |
| ,, Վարոսի կին Եղիսաբէթն . | | 20 |
| ,, Առաքել Սարգսեան . . | | 25 |
| ,, Յարութիւն Գրիգորեան . | | 20 |
| Հասարակութիւն Աղզուրայ գեղջ . | 7 | |
| Նոյն գիւղացի Գալուստ քահանայ Պապոյեան . . . | 1 | |
| ,, Մնացական Աւագեան . . | 1 | |
| ,, Պետրոս Աւագեան . . | | 50 |
| ,, Պապիկ Գալուստեան . . | | 50 |
| ,, Աստուածատուր Թումասեան . | | 50 |
| ,, Աւետիս Զախոյեան . . | | 20 |
| ,, Մնացական Մինասեան . . | | 25 |
| ,, Մինաս Գրիգորեան . | | 20 |
| ,, Խուրշուտ Խաչատրեան . | | 20 |
| Հասարակութիւն Գեօզալդարայ գեղջ . | 8 | |
| Նոյն գիւղացի Պապօ Աւետեան . | | 25 |
| ,, Մովսէս Յովհաննէսեան . | | 25 |
| ,, Յակոբ Գէորգեան . . | | 20 |
| ,, Մխիկ Կարապետեան . . | | 20 |
| ,, Գալուստ Գրիգորեան . . | | 10 |
| ,, Յակոբ քահանայ Եալոյեան . | 1 | |
| Հասարակութիւն Դրխտակիրման գեղջ | 10 | |
| Նոյն գիւղացի Վարդան քահանայ Տէր Սիմէոնեան . . . | 1 | |
| ,, Մինաս Մանուկեան . . | | 50 |
| ,, Գասպար Մելքոնեան . . | | 20 |
| ,, Յարութիւն Աւագեան . . | | 20 |
| ,, Յովհան Յակոբեան . . | | 20 |
| ,, Մանուկ Մարտիրոսեան . . | | 20 |
| ,, Յակոբ Մանուկեան . . | | 20 |
| ,, Սարգիս Գալստեան . . | | 20 |
| ,, Յակոբ Աւետեան . . | | 20 |
| ,, Մինաս Սարգսեան . . | | 25 |
| ,, Մանուկի մայրն . . | | 20 |
| ,, Սարգիս Պօղոսեան . . | | 20 |
| Հասարակութիւն Փոքր Արխվալի գեղջ | 6 | |
| Նոյն գիւղացի Ղազար քահանայ Կարապետեան . . | 1 | |
| ,, Պօղոս Արէլեան . . | | 20 |
| ,, Մելոյ Յարութիւնեան . . | | 20 |
| ,, Քոչոյ Բողոյեան . . | | 10 |
| ,, Բաղտասար Աստուածատրեան . | | 10 |
| ,, Խաչատուր Խոյեան . . | | 10 |
| ,, Յարութիւն Խաչատրեան . | | 10 |
| ,, Անտոն Գալստեան . . | | 20 |
| ,, Սարգիս Մարտիրոսեան . | | 20 |
| ,, Աղաճան Մելքոնեան . . | | 50 |
| Հասարակութիւն Մեծ Արխվալի գեղջ | 16 | |
| Նոյն գիւղացի Գէորգ քահանայ Մանուկեան . . . | 1 | |
| ,, Մարտիրոս քահանայ Տէր Յովհաննէսեանց . . | 1 | |
| ,, Խաչատուր Իսկենդարեանց . | | 50 |
| ,, Յակոբ Խաչատրեան . . | | 50 |
| ,, Յովսէփ Խաչատրեան . . | | 50 |
| ,, Գալուստ Մինասեան . . | | 40 |
| ,, Յակոբ Աւետիքեան . . | 1 | 10 |
| ,, Կարապետ Մետիչեան . . | | 10 |
| ,, Նազարէթ Ղուկասեան . . | 1 | |
| ,, Սիմէոն Գաբոյեանց . . | | 50 |

,, Ալթուն Յարութիւնեան . . 50
,, Ղանդիլ Կիրակոսեան . . 20
,, Բօղօ Պօղոսեան . . 50
,, Կիւրեղ Սաղաթէլեան . . 25
,, Յօվսէփ Պօղոսեան . . 25
,, Սարգիս Պօղոսեան . . 40
,, Գէորգ Պօղոսեան . . 20
,, Գալուստ Աղաջանեան . . 10
,, Խուրշուտ Սարգսեան . . 25
,, Մանուկ Յարութիւնեան . 20
,, Խաչատուր Յովհաննեան . 50
,, Մալխաս Յովհաննէսեան . 20
,, Յովհաննէս Աւետիքեան . 20
,, Սահակ Երանոսեան . . 20
,, Թադէոս Սահակեան . . 20
,, Բասենցի Շուշան կինն . . 40
,, Փիլիպպոս Թովմասեան . . 25
Հասարակութիւն Բաշ գեղջ . . 15
Նոյն գիւղացի Խաչատուր Մանուկեան 1
,, Վահան Տէր Յովհաննէսեան . 1

(Շարունակելի).

## ՆՈՒԷՐՔ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ.

Ստանալով մի քանի ամիս սորանից առաջ Նոր-Նախիջևանցի բարեպաշտուհի տիկին Մարիամ Տրապիզոնցեանցից մի արծաթի ոսկեզօծ խաչ ձեռաց, և այս օրերումս Աստրախանցի պարկեշտասուն Սարկաւագուհիներ Եղիսաբէթ և Կատարինէ Պետրոսեան Սարբաշեանցներից և նոցա աշխատութեամբ Աստրախանցի բարեպաշտ Հայազգիներից եկեղեցական զանազան զգեստներ՝ շուրջառ, մեծ և փոքր ծածկոցներ Սեղանի, ուրարներ, փորուրար, գօտի, բազպաններ, հողաթափներ ևլն. ընդ ամենն քսան կտոր, Ս. Գայիանեայ վանքի համար, սեպուհ պարտաւորութիւն ենք համարում յայտնել մեր ջերմեռանդ շնորհակալութիւնը Աստուածասէր նուիրողաց, մաղթելով Ս. Գայիանէ կուսից բարեխօս լինել ամենակարող Աստուծոյ առաջև՝ որ նա լինի վարձահատոյց նոցա ըստ ջերմեռանդութեան նոցին աստ և ի հանդերձելումն։

Այս առթիւ կարևոր եմ համարում ծանուցանել բարեպաշտ ազգայնոցս՝ որ թէպէտ իմ վանահայրութեան գրեթէ երկամեայ միջոցում ջերմեռանդ նուէրքներով այլևայլ անձանց և մանաւանդ Թիֆլիզեցւոց, նա և այլ տեսակ աղբիւրներով *) ես կարողացայ բաւականաչափ վերանորոգութիւն և պայծառութիւն տալ հանդերձ խարխալեալ եկեղեցուն և միանգամայն ամայացեալ վանքի, բայց այնու ամենայնիւ եկեղեցին մեծ կարօտութիւններ ունի թէ ներքին և արտաքին վերանորոգութեան կողմից և թէ զգեստների, զարդերի և ներքին պայծառութեան կողմից։

Վանահայր Ս. Գայիանեայ վանից
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ.

## Ի ԴԱՎՐԻԺՈՅ.

### Խաչատրեան Արշակ Ամատրոյ.

Արդէն ի վաղնջուց հետէ արևմտեան գիտնականք սկսել են հետազօտել արևելեան գրականութիւնն, յորում առաջին տեղն է բռնում Հայկական մատենագրութիւն.

Մեք արմենուհիքս թողլով մեր մայրենի պանծալի լեզուի ուսումնասիրութիւնն և փոխանակ պարապելոյ Հայկական գրականութեամբ և պաշտպան հանդիսանալոյ մեր հայրենեանց գովանի սովորութեանց՝ զհետ ենք լինում սեպհա-

(*) Սոցա մէջն է նաև Էջմիածնայ Մայր Աթոռոյ կողմանէ Վ. եհ. Հայրապետի շնորհած տարեկան վեց հարիւր ռոճիկն՝ մինչև երեք տարի. Ծ. Խ.